ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

29.07 2013 թվականի N: 165-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի <<բ>> կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի N 624 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգի>> 14-րդ կետի <<ե>> ենթակետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու մասին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի մայիսի 13-ի N 114-Ա որոշման 1-ին կետով ստեղծված հանձնաժողովի կողմից քաղաքաշինության բնագավառում Մարալիկի քաղաքապետի գործունեության պլանային ստուգման արդյունքում կազմված 2013 թվականի հունիսի 24-ի արձանագրությունը (համաձայն հավելվածի).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետին առաջարկել՝

ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N:1473-Ն որոշմամբ հաստատված <<Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու>> կարգի և Հայաստան Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N :273-Ն հրամանով հաստատված <<Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների>> պահանջների կատարումը:

2. Ձեռնարկված միջոցների մասին 10-օրյա ժամկետում տեղյակ պահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է